

շարունակելով փարատել եւ հոգեւորականութիւնը իւր կոչման բարձրութեան վերայ դնել: Սակայն իրական կեանքը հերոսներ տոկուն եւ անձնագործ մարդիկ շատ չէ ստեղծում. իսկ մենք շատ հոգեւորականների պէտք ունինք, որոնք զոնէ փոքր չափով իրենց կոչման համապատասխան լինէին: Եւ այդպիսիները ասպարիզի վերայ չեն երեւայ, քանի հասարակութիւնը հալածում է նոցա իւր նախապաշարումներով: Իւր դէպի հոգեւորականութիւնը ցոյց տուած արհամարհանքովն ու հակակրօնութեամբ: Այո՛, հաւանք է. զուցէ խիստ է այս դարձումը: Բայց ճշմարտութեան հակառակ չէ. գիտակցական հալածանք չկայ հարկաւ. ժողովրդի մեծամասնութիւնը ցանկանում է լաւ հոգեւորականներ ունենալ. բայց նորա տրամադրութիւնն ու հակումները այնպէս չեն ուղղուած, այնպէս չէ նորա հոգեկան աշխարհի կազմակերպութիւնը: Եւ հոգեւորականութիւնը քաջակրօնութիւն զոնէ նորա կողմից:

Գերմանացի յօդուածագիրը ուղիղ է նկատել, որ հոգեւոր ասպարիզի վերայ մեզ սպառնացող զլխաւոր շարիքը ո՛չ թէ տգիտութիւնը, ո՛չ թէ ամեն տեսակ նախապաշարումներ եւ թերութիւններ իւր հետ քերող անցեալն է, այլ սխալ կրթութիւնը: Բաղաբարկութիւնը արագ քայլերով յառաջ է գնում՝ գիտութիւն եւ նախապաշարումներ կամայ ակամայ տեղի կտան նորան. բայց փոխարէնը զարգանում է եւ կլանում՝ ամեն ինչ նիւթական շահերի հետամուտ եղող մի հոգի, որին այլեւս ոչինչ չէ հետաքրքրում: Ինչ որ նիւթական շրջանից դուրս է. որ մի տեսակ ընազդմամբ խորշում է այն քողովից, ինչ որ հոգեւորական անուն է կրում իւր վերայ: Ահա այդ մեծ թըշնամու դէմ՝ պէտք է կռիւ սկսել հոգեւոր գէնքով: Իսկ որպէս զի հոգեւոր գէնքը գործածելու համար յօժարամիտ եւ ընդունակ անխոյստներ շատ զանազան հարկաւոր է նոցա առաջ ծանապարհ հարթել: հարկաւոր է նիւթապէս եւ քարոյսապէս քաջալերել նոցա. եւ այդ պէտք է անի ո՛չ միայն եկեղեցական իշխանութիւնը, այլ առաւել այն հասարակութիւնը, որ ինքն իւր միջից հովիւներ է ընտրում եւ նոցա պահպանութեան համար հո-

գում. պէտք է անեն այն քողով մարդիկ, որոնց մէջ դեռ հոգեւոր նախանձախնդրութիւն մնացել է:

ՄԱՅՐ ԱԹՈՒ.

Նորին Ս. Օծութիւն Վեհափառ Հայրապետը՝ ի մեծ ուրախութիւն Միաբանութեան եւ Իւր հօտի, Մայր Աթոռ ժամանեց ողջամբ ամսոյս 20 ին, ուրբաթ երեկոյ ժամը 5 ին: Երեկոյեան ժամերգութիւնից յետոյ ամբողջ Միաբանութիւնը զգեստաւորուած, ժեմարանի ուսուցիչներն եւ աշակերտները, եւ ժողովրդի հոծ բազմութիւն սպասում էին վաղի արտաքին դարպասի մօտ, ուշ չդարձնելով դարնան առատարեր առաջին անձրեւի մանր տեղալուն, այլ լի միայն մի փափագով, ժամ առաջ տեսնել այնչափ պատկառելի դէմքն այն ծերունի անվիհեր Հովուապետի, որ մի անգամ եւս այսպէս արհամարհեց ձմեռուայ խստութիւնը եւ երկայն ճանապարհի նեղութիւնները՝ Տիրոջ ողորմութեամբն ու Իւր երիտասարդական անսպառ եռանդի ուժով Իւր հօտի կարիքներին հասնել կարողացաւ, եւ պիտի կարողանայ անշուշտ դեռ երկար տարիներ:—Հանդիսաւոր թափօրով Վեհափառ Հայրապետը դէպի Մայր Տաճար առաջնորդուեցաւ, ուր, իշման բաց սեղանի առաջ, ջերմագին մաղթանքներ վերադարձնելով դէպի Լուսաւորչի գահի արթուն Պաշտպանը, միաբանութեան ուղեկցութեամբ Վեհափառ եղաւ հանգստանալու: Արդէն տարածած էր օրը, Յաջորդ օրն եւս փոքր ինչ տկարութիւն եւ յօգնածութիւն զգալով՝ Նորին Սրբութիւնը միայն ամենաանհրաժեշտ դործերով զբաղուել կարողացաւ. իսկ Միաբանութեանը, ժեմարանի ուսուցչական խմբին եւ այլ այցելուների ընդունեց յաջորդ կիրակի, օրը, Ս. պատարագից առաջ եւ յետոյ, օրհնեց եւ պատմեց մի քանի ճանապարհորդական տպաւորութիւններ, խոստանալով յառաջիկայ կիրակիներէց մէկին եկեղեցւոյ մէջ, ի լուր ժողովրդեան աւելի ընդարձակօրէն խօսել այս մասին: Ս. պատարագին Վեհափառ Հայրապետը եկեղեցի էր իջել:

Մեզպէս միշտ նոյնպէս և այս տարի Մայր Աթոռում հանդիսով տօնուեցաւ Սրբոց Ղեւոնդեանց և Վարդանանց յիշատակը: Փետրուարի 12-ին ս. պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարուեց Մայր տաճարում ի յիշատակ Աւարայրի 1036 նահատակներին:

Այդ օրը միաբանական սեղանին մասնակցեցին Ծեմարանի ուսուցիչները, Սինօգի ծառայողները և պատուաւոր հիւրեր: Օրուայ տօնի առթիւ սեղանատանը ճաշի ժամանակ խօսեցին Արժանապատիւ Կարապետ վարդապետը և նորընծայ Բարեշնորհ Դարեգին տեղան:

Թէ ս. Ղեւոնդեանց և Թէ ս. Վարդանանց տօնին Ծեմարանում զրականական երկոյթներ տեղի ունեցան. վերջին երկոյթին որից յետոյ փոքրիկ աշակերտական ներկայացում ևս կար, ներկայ էր Մայր Աթոռի միաբանութիւնը: Ներկայացումներ տեղի ունեցան նաև բարեկենդանի յաջորդ օրերին, նոցա թուում երկու կատակերգութիւններ ուսուց լեզուով. ներկայացումներն ընդհանրապէս շատ յաջող անցան և, զուարճութիւն պատճառելուց զատ, անշուշտ իւրեանց կրթիչ ազդեցութիւնն ունեցան, շնորհիւ ղեկավարող ուսուցչաց գործ դրած ջանքերին:

Բարեշնորհ Բարդէն արեղայ Աղաւելեանը նշանակուած է Մայր Աթոռի զանձապահ Բարձր. Աշտ վարդապետի փոխարէն, որ Տպարանական ժողովի նախագահութիւնը ստանձնելով՝ հրաժարուել է զանձապահութիւնից:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՏՓԻՒՍՈՒՄ

Յունուարի 19-ին Տփլիսի վանքի աւագ եկեղեցու բակում Վեհափառ Հայրապետի հրամանով չքաւորներին ու զաղթականներին բաժանուեցաւ 300 ռուբլի:

Յունուարի 25-ին, առաւօտեան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը այցելել է Կովկասի կառավարչապետ իշխան Դ. Ս. Գօլիցին և մօտ 3 ժամ առանձին խօսակցութիւն է ունեցել իշխանի հետ:

Փետրուարի 2-ին Նորին Վեհափառութիւնը աչքի է անցրել Տփլիսի թանգարանը, մնալով այնտեղ 1½ ժամ: Նորին Ս. Օծութեան ուղեկցում էին Արժ. Գէորգ վ. Երիցեանը, Արժ. Կորիւն վարդապետը և թարգման պ. Ա. Բիշմիշեանը: Պ. Ա. Երիցեանը տալիս էր Վեհափառին հարկաւոր բացատրութիւններ: Նորին Սրբութիւնը բարեհաճել է թանգարանի վերատեսչի մօտ սուրճ ընդունել:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Փետրուարի 3-ին Վեհափառ Հայրապետին ներկայացել են Բագուից եկած պատգամաւորները և խնդրել են Նորին Սրբութեան այցելել Բագու: Վեհափառ փետրուարի 4-ին Տփլիսից զիշերուայ գնացքով հաճել է մեկնել Բագու: Նախ քան մեկնելը Ներսիսեան դպրոցի հոգաբարձուները և ուսուցիչները բազմ են ունեցել բարի—երթ մաղթելու և Նորին Սրբութեան օրհնութիւնը ստանալու: Վեհ. Հայրապետին ճանապարհ դնելու համար առաջնորդարան են հաւաքուել Տփլիսի հայ հոգեւորականները և պատուաւոր քաղաքացիներ: Նորին Ս. Օծութեանը երկաթուղու կայարանում զիմաւորել են Տփլիսի պ. նահանգապետը, պ. ոստիկանապետը և Բագուից եկած պատգամաւորները: Վեհափառ Հայրապետը ճանապարհ է ելել զէպի Բագու երկրչեան մօտ ժամը 10—ին: Նորին ս Օծութեան ուղեկցել են Տփլիսի թեմ. առաջնորդ Դեր. Գէորգ արքեպիսկոպոսը, Արժ. Գէորգ ծ. վ. Երիցեանը, Կորիւն վարդապետը և Բագուից եկած պատգամաւորները:

Գանձակի կայարանում Վեհափառ Հայրապետին զիմաւորել են զրեթէ Գանձակի բոլոր հայ հասարակութիւնը, նոյն տեղի փոխանորդ Բարձր. Բազրատ վ. Թաւաքալեանի առաջնորդութեամբ, Գանձակի քաղաքալիւ իւր իւր օգնականի հետ, զաւառապետը և ուրիշ շատերը և արժանացել են Նորին Սրբութեան օրհնութեանը, ժանապարհին զիմաւորել են նաև Արցախի թեմի Կոնսիստորիայի աւագ անդամ Բարձ. Սահակ վարդ. Բաղդասարեան, Շուշու թեմական դպրոցի Տեսուչ Արժ. Տիրայր վարդապետը և Շամախու Կոնսիստորիայի նախ-

անդամ Արժ. Սահակ վարդ., որոնք և միացել են շքախմբին:

Փետրուարի 5-ին Վեհափառ Հայրապետը ժամանել է Բագու. ընդունելութիւնը շատ հանդիսաւոր է եղել: Բագուի կայարանում Վեհափառ Հայրապետին զիմաւորել են քաղաքապետ յս. Բելեւաւսկին բոլոր իրաւասունների հետ առանց կրօնի և ազգութեան խտրութեան, մամուլի ներկայացուցիչները և անթիւ ժողովուրդ: Վեհափառ Հայրապետի ողջամբ Բագու ժամանելը մի կարճ և ազգու ծառով շնորհաւորել է պ. քաղաքապետը, որի համար Սորին Սրբութիւնը իւր գոհունակութիւնն է յայտնել: Նրկաթուղու կայարանից մինչև մայր եկեղեցին ամեն տեղ ժողովուրդը դիմաւորել է իւր Հայրապետին «կեցցէ Հայրիկ» ցնծապէս աղաղակներով:

Սորին Ս. Օծութեան համար պատրաստած է եղել մարդասիրական ընկերութեան նոր շինութիւնը: Բագուում Վեհափառ Հայրապետին ներկայացել են պ. նահանգապետը և նորա օրհնութեանը արժանացել զանազան դասակարգի ներկայացուցիչներ: Փետրուարի 6-ին ներկայացան Շամախույ պատգամաւորները: Վեհափառը փոխ այցելութեան է գնացել այդ օրը պ. նահանգապետին: Փետր. 7-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճել է զրնայ Սև քաղաքը. Սորէլ ընկերութիւնը խիստ պատուաւոր ընդունելութիւն է ցոյց տուել: Ընկերութեան կողմից Վեհափառ Հայրապետին մատուցել են մի արծաթեայ ոսկեզօծ փառահեղ այրում: Անդլիական Վիշաու ընկերութիւնը Վեհափառի բարեհաճ տրամադրութեան ներքոյ է դրել 15000ռ. և Սորին Սրբութեան շնորհաբեր այցելութեան աթիւ 5000ռ. նուիրել է Մարդասիրական ընկերութեան և 5000ռ. յանձնել պ. նահանգապետին՝ յօգուտ գողթականների: Սորին Ս. Օծութեան Բալախանի այցելած ժամանակ հայ նաւթարդիւնարներդները խոստացել են այդ օրուայ արդիւնքը նուէր բերել Վեհափառին. իսկ պ. Ա. Ժատուրեանը ամեն տարուայ փետրուարի 9—15-ի արդիւնքը նուիրել է Ս. Լժմիածնին և Նրբասաղէմի հայոց վանքին:

Ս. Ղեռնգեանց տօնի օրը ս. պատարագին Վեհափառ Հայրապետը եկեղեցի է իջել և

ներկայ խուռն բազմութեան բացատրել նոյն օրուայ վսեմ յիշատակի նշանակութիւնը: Եկեղեցի է իջել Սորին Վեհափառութիւնը նաև ս. Վարդանանց տօնին, երբ պատարագիչ է եղել և քարոզ խօսել Արժ. Դէորդ վ. Նրիցեանը:

Սորին ս. Օծութիւնը Բագուից մեկնել է ուրբաթ ամսոյս 13-ին, երեկոյեան զնացքով, որ ճանապարհին փոթորկի հանդիպելով, միւս օրը ժամը 2-ին միայն (2 ժամ ուշ սովորականից) Դանձակ է հասել: Կայարանում Վեհափառին դիմաւորել է հայ հասարակութեան ստուար բազմութիւնը՝ փոխանորդ Արժ. Բագրատ վ. Թաւաքալեանի առաջնորդութեամբ և մի խումբ քաղաքի ներկայացուցիչների՝ զրուխ ունենալով քաղաղխի պաշտօնակատարին, որ և ողջունել է Սորին Վեհափառութեան շնորհաբեր մուտքը մի համառօտ ծառով: Վեհափառը այդ սիրալիր ընդունելութեան համար իւր գոհունակութիւնը յայտնելուց և փոքր ինչ հանգստանալուց յետոյ՝ փակ կառքով ուղևորուել է քաղաք, ուր նախ հանդիսաւոր թափօրով և խուռն բազմութեան «կեցցէ» ների ուղեկցութեամբ ս. Յովհաննէս եկեղեցին է դիմել, աղօթել և օրհնել ժողովրդին: Ապա իջեանել է պ. Նարաթեանների տանը: Բիշ յետոյ Սորին Վեհափառութիւնը ընդունել է Դանձակի պ. նահանգապետի այցելութիւնը, որին և հրաւիրել է մասնակցել իւր համար պատրաստուած շքեղ ճաշին: Յաջորդ, բուն բարեկենդանի կիրակի է օրը Վեհափառ Հայրապետը ս. պատարագին եկեղեցի է իջել և մի ազգու քարոզ խօսել, յորդորելով Դանձակեցիներին շմոռանալ իրենց պարտքերը դէպի աղքատ և պանդուխտ աղգակիցները: Այնուհետև Սորին Սրբութիւնը այցելել է փոխադարձաբար պ. նահանգապետին և ընդունել հասարակութեան կողմից պ. Ս. Տէր Ներսիսեանի տան իւր համար պատրաստած շքեղ հացկերոյթը: Մասնակցելու հրաւիրուած են եղել պ. նահանգապետը, մի շարք պաշտօնական անձինք և պատուաւոր քաղաքացիներ:

Նրկուշաբթի փետր. 16-ին Վեհափառ Հայրապետը մեկնելով Դանձակից՝ դիշերեց Աղստաֆա կայարանում և յաջորդ օրը հասաւ Դիլիջան, ուր ընդառաջ էր գնացել Ս.

րեանի թեմ: փոխանարդ Դեր: Ներսէս Արքեպիսկոպոսը: իսկ Դեր: Դեորդ արքեպիսկոպոսը՝ բաժանուելով այդտեղ Վեհափառի շքաւամբից, վերադարձաւ Տփլիս: 18-ին Նորին Սրբութիւնը գիշերեց Նիւնովկա կայարանում ուր զիմաւորելու էին զնացել Արժ. Դարեգին և Աշոտ վարդապետները: իսկ 19-ին հասաւ Երեան, ուր մի իջեան ընդառաջելով, Մայր Աթոռի միաբանութեան կողմից ողջունեցին Վեհափառի ողջամբ վերադարձը Դեր: Սուքիաս արքեպիսկոպոս և Դեր: Արիստակէս Եպիսկոպոս: Նորին Վեհափառութեան զիմաւորելու համար Երեան էին զնացել նաև ժեմարանի կողմից Պ. Տեսուչն ու Բարեշն. Դարեգին արեղայն: Վեհափառը մի օր միայն մնաց Երեանում ուր ընդունեց և վերադարձրեց պ. նահանգապետի այցելութիւնը: Ի միջի այլոց այցելութեան եկաւ այստեղ և սիրավիր ընդունելութիւն գտաւ Երեանում հիւր եղող Մակուայ խանը:

4. Նարեկացու աղօթքներից մի քանիսը հասարակ գրութեամբ, բերրուած և անկազմ:
5. Յայամաւորը, բոլորագիր, թղթեայ, բոլորովին բերրուած սկզբից և վերջից թերի:
6. Փոքրագիր աղօթամատոյց, բոլորագիր, մագաղաթեայ, մի պատկերով և ծաղկեղաններով զարդարուած: Գրուած Կաթայում Նիկողոս գրչի ձեռքով, ՈՊ. (1241) թ. Նուէր Հնորհունակ դպիր Դաւուս և Տ. Միսրաք վարդապետ Տ. Մկրտչեանցից:
7. Քերականութիւն և տրամաբանութիւն Սիմէօն վարդապետի Զուղայեցւոյ, Նօտագիր, թղթեայ, վերջը թերի, Նուէր Հնորհ. դպիր Դաւուս Տ. Մկրտչեանցից:
8. Օրէնք Հայոց—Դատաստանական սահմանադրութեան, բարեպաշտ կայսերն Յուստինիանոսի, ի Նախիջևան Տօն գետոյ, 1863. (Յարմարեցրած Աստրախանի Հայոց ինքնավարութեան գործադրութեան համար, ինչպէս երևում է յառաջաբանից), Նուէր պ. երումով Շանալիզ—Կաւսարականից:

ՏՊՈՒԱԾ ԳՐԷՐ.

Վեհափառ Հայրապետի մատենադարանից ստացել ենք.

ՄԱՏԵՆԱԳԵՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ.

Մայր Աթոռի մատենադարանի համար շնորհակալութեամբ ստացել ենք հետեւեալ գրքերը.

1. Մի բոլորագիր, պատկերազարդ, մագաղաթեայ արձամապատ աւետարան, որ Նորին Վեհափառութեան աջահամբոյր է տուել տիրուհի Հիւրիգադ Դաւան իւր ամուսին Տէր Գրիգոր քահանայի յիշատակին:
2. Մի բոլորագիր, թղթեայ, արձամապատ աւետարան, չորս աւետարանիչների պատկերներով և լուսանկարների վերայ հասարակ ծաղկեղաններով, Գրիշն է Յակոբի գրուած ՌՃԳ (1655) թ.: Նուէր պ. պ. Պետրոս և Մարտիրոս Տէր-Մարտիրոսեանցից:
3. Մի Նօտագիր բառարան, որին կցուած է և Ներսէս Հնորհալու. Գիր խոստովանութեան թուղթը:
4. Die Bibel in Bildern, von Julius Schnorr von Carolsfeld. Leipzig.
5. The Family national Bible, by the Rev. Matthew Henry.
6. Братская Помощь пострадавшим въ Турции Армянамъ, Москва, 1887. փառակազմ, երկու հատորում ամփոփած. Նուէր Վեհափառ Հայրապետին պ. Դրիգոր Զանգեանից:
7. Պ. Յովակիմ Զարպաշեանից—Յուցակ Հայերէն Զեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա. Հ. Յ. Տաշեանի. Վիեննա. 1895.
8. Պերճ Պաօշեան. Կառուածադիկ. Վէպ. Երկր. տպագրութիւն. Տփլիս. 1897. Հեղինակից: Հասցէ՝ Въ Монастырскую Библиотеку Эчмиадзинъ.

Մատենադարան պետ.

ԴԱՐԵԳԻՆ ԱՐԵՂԱՅ.



Տ Ե Լ Թ Ն

ՎԵՅԱՓԱՌ Լ ՎԵՅԱԾՆՈՐԿ ՍՐԲՈՅ ՕԾՈՒԹԵԱՆ

ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ՀՈԳԵՒՈՐԻ

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՄԿՐՏՉԻ,

ԱՍՏՈՒԱԾՂՆՏԻՐ ԳԱՀԱԿԱԼԻ ԱՐԱՐԱՏԵԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ՝

ԱՌԱՔԵԼԱՇԱԽԻՂ ՅԱԶՈՐԴԻ

ԹԱԳԷՈՍԻ Լ ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍԻ Լ ԳՐԻԳՈՐԻ ԵՐԱՆԵԼԵԱՅ,

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՍՍ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ,

ՀԱՆՈՒՐՅ ՀԱՅ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԵԱՅ ՀՕՏԱՊԵՏԻ՝

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՄԵԾԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ.

ՀՈԳԻՈՎՆ ՀԱՅՐ, ՍՐՏԻՆ ՀԱՅՐԻԿ, ԿՈԶՄԱՄԲՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ՝

ՅԱՒՈՐ ՏՕՆԻ ԱՆՈՒԱՆԱԿՈԶՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ,

Ի ՅԻՇԱՏԱԿԻ ԾՆՆԴԵԱՆ ՕՐՀՆԵԱԼ ԱՄԼՈՐԴԻՈՅՆ՝

ԱՌ ԲԱՐԶՐԵԱԼՆ ԷՆ ՏԷՐՆ ԱՄԵՆԻ

Իղձ անկեղծաւոր մաղթանաց ի վեր առաքի,
 զի ընդ Մկրտչին ի լուացումն ցաւոցն փարատման
 ընդ Կարապետին ի յառաջընթացութիւն բարեաց օրհնութեան
 ընդ Մարգարէին յաճումն յուսոյ ակնկալութեան
 ընդ Նաաթելին ի քարոզչութիւն Բանից սրբութեան
 ընդ Մարտիրոսին յերկայնմտութիւն աստեաց փորձութեան
 ընդ Նւեմիսին ի լուր խոստացեալ իրաց խնդութեան
 և ընդ Յովհաննու ի տես Փրկողին յերկնից առաքման
 ընդ Եօթնանուն փառաւորելոյն անուանակիրն Նորին
 ամաց յօլովման անպարփակ շրջանաւ
 կեցեալ երանի
 իւրոցն լիցի երջանիկ հովանի
 Նկեղեցւոյ և ազգի
 բաղմաշխատ կենօք և բաղմարդիւն ձրիւք
 Պետ և Վէտ:

Ներկայ վերտառութիւնը ուղարկուած է մեզ Կ. Պոլսից, իբրեւ մի արձագանք այն ջերմագին իղձերի և բարեմաղթութիւնների, որ վեհափառ Հայրապետի հեռաւոր զաւակները Նորին Սրբութեան անուանակոչութեան աօնի առթիւ արտայայտել կցանկանային: Առաքողի ենթադրածից աւելի ուշ հասաւ այն մեր ձեռքը, ուստի ստիպուած եղանք այս համարի մէջ յառաջ բերել:

Մինչ մայրաքաղաքի տարրեր դաւանութեանց պատկանող քրիստոնեաները սահմանադրական խնդիրներն վերաբնութեամբ են զբաղուած: Հետաւոր հայկական նահանգների բոլոր դաւաններից սովի զարհուրելի ձայներ են լսուում: Մինչ սուլթանը առատաբաշխ խոստումներով կեանքի գոյքի ապահովութիւն և հպատակների մարդկային իրաւանց պաշտպանութիւն է քարոզում իւր մայրաքաղաքի մէջ, գաւառական քաղաքներում թշուառ հայ գեղջուկին զրկում են մի կտոր հացից և վնասում հայրենի գիւղերից, որոնք արդէն բուերի և վայրի գազանների բնակարան են դարձած:

— Կ. Պոլսի Հայոց լրագրիւնների ասելով՝ սուլթանը հայ կաթողիկոսներին հրամայել է գործադրել վաղուց նոցա խոստացուած սահմանադրութիւնը: ասում են որ արդէն երեսփոխանական ժողովը կազմակերպուել է 56 անձինքներից, որոնցից 8-ը հոգեւորական, 48-ը աշխարհական են: Աշխարհականներից մկայն 14-ը գաւառացի են, իսկ մնացածները մայրաքաղաքից: Ընտրուածների մէջ կան հայ կաթողիկ համայնքի յայտնի ներկայացուցիչներ, ինչպէս օր. Սազդ, որ այժմ Ֆինանսների մինիստր է, Զարեհ Շիշմանեան և այլք:

— Զմեռնային սաստիկ ցրտերի ժամանակ կառավարութիւնը Վանից և այլ քաղաքներից դուրս վանեց բազմաթիւ հայ գաղթականների, իրենց գիւղերն ուղարկելու պատրուակով: Թշուառ աղքատների թիւն այնքան շատ է, որ եղած նպաստները նոյն իսկ անհրաժեշտ պիտոյքներին բաւականութիւն չեն տալիս:

— Վանից, Կարինից, Բաղէշից, Մարաշից և այլ տեղերից Կ. Պոլսոյ թերթներին ուղղուած տեղեկութիւնները ցոյց են տալիս, թէ գոնէ այս ձմեռ այդ խեղճերի կեանքը պաշտպանելու համար հարկւոր էր անուազն 1,000,000 ֆրանք: Արդեօք ինչպէ՞ս անցրին նորա դաժան ձմեռը, առանց այդպիսի պաշտպանութեան:

— Բաղէշից գրում են, որ տեղական կառավարութիւնը ոչ մի աղքատ միջոցի չի գիտում տների կողոպտման և անասունների յափշտակութեան առաջն առնելու համար:

— Յունիս և Յուլիս ամիսներում Սասունի վիճակը գոհացուցիչ էր, իսկ գրանից յետոյ քրդերը սկսեցին իրենց սովորական աւարառութիւնները և բոլոր հունձն այրեցին:

— Միմիայն Մշոյ գաշտում հայոց նպաստամտոյց յանձնաժողովի հաշւով ձմեռս 4,000 հոգի օրական հացի կարօտ են եղել: Տիգրանակերտում և շրջակայքում 12,000, այնպէս որ տեղական աղքատախնամ յանձնաժողովը խնդրում է 55,000 ֆր. իւր տրամադրութեան տակ դնել, Կարինում ևս հունձերը բաւարար չեն:

— Երզնկայի Եղնիկեան ուսումնարանը, որ ահա բոլորում է իւր գոյութեան հնգամակը, նիւթական վերջին ճգնաժամին հասած՝ փակուելու էր

անշուշտ, եթէ առաջնորդական տեղապահ Դանիէլ վարդ. Յակոբեան օրինակելի նախանձանդութիւն չցոյց տար ի պաշտպանութիւն զպրոցի, Բարձր. Հայրը ժողովելով քաղաքական ժողովի և ս. նշան կեկեղեցութեղական խորհուրդի անդամներին, և ուրիշ ձեռնհաս անձանց՝ նոցա խորհրդակցութեամբ կազմում է մի հոգաբարձութիւն, որի նպատակն է չքաւոր աշակերտաց համար որդեգրողներ դանել, 2 օսկի տարեկան թոշակով, Հայր սուրբը ներկայ եղողներին օրինակ տալու համար յանձն է առնում: 2 որդեգրի փող ինքը վճարել, նորակազմ հոգաբարձութիւնը թաղային վարժարանը միացնում է Եղնիկեան զպրոցի հետ՝ այնպէս որ աշակերտների թիւը այժմ հասնում է 240-ի, որոնցից 160-ը թոշակւոր են և 18-ը ձրի:

— Կ. Պոլսոյ Սրբազան Պատրիարքի ձգտումները Հայ ժողովուրդի շահերի և Բարձրագոյն դրան պահանջների մէջ ներդաշնակութիւն յառաջացնելու նկատմամբ՝ ամէն զովասանքի արժանի են: Եթէ ներկայ յարաբերութիւնների արդիւնքը գոհացուցիչ չէ ըստ ամենայնի՝ անիրաւացի կլինէր զորա պատասխանատուութիւնը Պատրիարքի վերայ ձգել, նա աշխատում է խաղաղ ճանապարհով ստանալ այն, ինչ որ Հայերն իրեն հաւատարիմ հպատակների պահանջելու իրաւունք ունին: Յամենայն դէպս, առանց ի նկատի առնելու այն ծանր գրութիւնը, որի մէջ նա գտնուում է՝ կասկածի ներքոյ դնել նորա բարեխղճութիւնը կարօտելոց համար նորան ուղարկուած փողերի նկատմամբ, ինչպէս անում են ոմանք վերջերս, բարոյական նրբագիտութեան ծայրայեղ պակասութիւն միայն կարող է համարուել:

— Սուլթանի ծննդեան տօնի օրը Ս. Պատրիարքը Մայր եկեղեցի իջաւ, շրջապատուած եպիսկոպոսներով և վարդապետներով՝ սովորական մաղթանքից յետոյ «Տուք զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ» բնաբանով մի քարոզ խօսեց, իրեն յատուկ պերճախօսութեամբ և ներկայանալով նոյն օրը սուլթանին, մի ուղերձով յիշեցրեց Հայոց դարեւոր ծառայութիւնները Օսմանեան գահին և մի շարք առաջարկներ արաւ, իւր ժողովրդի վիճակը բարւոքելու համար: Սուլթանը գոհ մնաց ն. Բ. Սրբազնութիւնից և խոստացաւ իւր շնորհներն անպակաս անել հայ հպատակների վրայից:

— Եւրոպական թերթների ասելով Սուլթանը ստորագրել է մի Իրաքէ, որով բաւականութիւն է տալիս Ս. Պատրիարքի առաջարկած 16 կէտերից հնգին. 1) Եթէ եկեղեցական ազատութիւն ճաշկանկան կայսրութեան սահմաններում. 2) Երկու տարով զինուորական հարկերից ազատութիւն. 3) Թոյլատրել Պատրիարքին հոգալ արտաքսուած հայերի մասին. 4) Հանգանակութիւն սկսել յօգուտ հայ կարօտեալների. 5) նոր զպրոցներ բանալ: Առաջին 4 կէտերը զլիաւորներն էին, Այս իրադէն հայերի կողմից յաջողութեան մեծ նշան է համարուում: